ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 93

«03» 11 2022 թ.Ք. Երևան

ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գրիգոր Վալիկոյի Էլիզբարյանին ՀՀ զինվորական դատախազի տեղակալի պաշտոնին նշանակելու և ՀՀ զինվորական դատախազի, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի պարտականությունների կատարումը վերջինիս վրա դնելու և ՀՀ գլխավոր դատախազի 2022 թվականի սեպտեմբերի 16-ի N 335-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2022 թվականի նոյեմբերի 1-ի՝ համապատասխանաբար N 402-Ա և N 404-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է կատարել վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Կատարել Գ.Հակոբյանի կողմից՝ ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում, իսկ Գ.Էլիզբարյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

Հանձնախմբի ղեկավար՝

Բաղդասարյան Գևորգ - ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ

Հանձնախմբի անդամներ՝

Աղաբեկյան Կարեն - ՀՀ զինվորական դատախազի տեղակալ,

Մարտիրոսյան Հայկ -	ՀՀ դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ,
Նազարեթյան Արմինե -	ՀՀ դատախազության արխիվի բաժնի պետ,
Գևորգյան Թամարա -	ՀՀ դատախազության առաջին բաժնի պետի պաշտոնակատար,
Հարությունյան Աստղիկ -	ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության տարածքային վարչության պետ:

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2022 թվականի նոյեմբերի 14-ը:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ